



Թագրել այն պարագային՝ երբ տղուն յիշեալ կարողութիւնները փոխանակ զարգանալու աւելի կը զնտուին, Պ. յոգուածագրին էն մեծ սխալն է զոր իրեն չպիտի ուզեմ ներել, եթէ գիտնամ թէ ինքը ուսուցիչ մըն է. վասն զի ատով տղուն այլ և այլ մտաւոր կարողութեանց բնութեան և զանոնք զարգացնելու եղանակի մասին իր վերին աստիճանի համբակ ըլլալը ցոյց կուտայ: Այստեղ աւելորդ չէ կարծեմ միջանկեալ հարցնել թէ ինչո՞ւ մեր թերթերու յոգուածագրերէն շատերը ծածկանունի մը տակ կը թագրին, երբ անկեղծութիւնը և զրամենուն պատասխանատուութիւնը վրանին պարտք կը գնէ իրենց բուն անունով երեւի: Այդ երեւոյթին պատճառը արգելօք համեստութիւնն է չէ թէ՛ վախը, Բայց անցնինք բուն խնդրին, Պ. Զարգար, այն օգուտները, զորս շատ գէշ փառատաբանութեամբ մը մեր հրատարակային քննութեանց կը վերագրէք, եղբօ՛ւկ որ գոյութիւն չունին. ատիկայ կենսախօսանք և փորձառական հոգեբանութեան քննիչ մը հասկցոյ մանկավարժին համար իսկ բացայայտ է, ուստի ներեցէք որ համառօտակի միայն ձեր կարծիքին հակառակը փաստեմ: Ամբոխին կամ բազմութեան առջեւ ազատ համարձակ խօսիլը կարծու թեան կամ խառնուածքի յատկութեան մըն է. որմէ եթէ զուրկ ենք, մեր կամքն և իմացականութիւնը անզօր են մեզ առով օժտելու: Բնականէն տրա-

մադիր ըլլալու ենք համարձակ ու լաւ շօտելու, կրթութիւնը այդ յատկութեան զարգացման խիստ սակաւ կը նպաստէ: Կիկերոն կըսէ թէ ամենէն հոշակաւոր ճարտասանները, ինչպէս նաեւ հասարակ մահկանացուները բազմութեան առջեւ խօսելու ատեն վախի զգացում մը և այլ յուզումներ կունենան ու շատ քիչքը միայն կրնան ինքզինքնին զուգել, կառավարել: Բազմութիւն ունկնդիրներու առջեւ խօսելը իրենց բան գործ ընող Ատիլ յօր, Մաճորաի, Մանգեկացցայի նման շատ գիժտուն բրօքիէսօրներն անգամ կը յայտարարեն թէ դասախօսելու համար ամէն անգամ անհազին յուզումներու կենթարկելին, և այդ պատճառաւ իսկ իրենց առողջութիւնը կը վտանգեն: Փրանսացի նշանաւոր հոգեբան Մորպայօն խօսելու, ճառելու ատեն իր կրած յուզումներէն այնքան ուժով արկը լար որ չէր կրնար կէս մամէն աւելի խօսիլ առանց ծանրապէս հիւսնադանալու: Աշխարհահռչակ Տարիլին չէր կրնար հրատարակային դասախօսութիւն մը ընել առանց վախնալու և յուզուելու: այդ պատճառաւ է որ անկիւայ միշտ խոյս տուած է բազմութեան առջեւ երկու խօսք արտասանելէ: Այս երեւոյթը խառնուածքի արդիւնք է որու հանդէպ կամքն ու իմացականութիւնը անզօր կը մնան—կըսէ համբաւաւոր կենսախօս-հոգեբան Մօսոն: Ուրեմն մանրիկ տղաքն ու պատանիները, որոնք աւելի գիւրազգայ և վախկոտ են, ինչպէս կրնան պաղա-

րիւն մնալ հրատարակային քննութեանց ատեն, երբ նոյնիսկ զիրենք չչարհուրեցնելու համար այդ քննութիւններու անունը, եթէ կը հաճիք «զբօսանք» դնենք: Մանուկները, որոնք չափահասներէ շատ աւելի փափուկ կարծուածք մը ունին, ինչպէս կուզէք որ քննութիւններու առթած յուզումներէն չզնտուին և պաղապային լաւ ճարտասաններ ըլլալու համար ազօր խօսելու, իրենց միտքը լաւ բացատրելու ճգնին: Ուսուցիչը տարւոյն ամբողջ ընթացքին մէջ տշակերտին հետ իր ունեցած մտերմական ու բարեկամական յարաբերութեամբն է որ պիտի ջանայ անոր երկզուտութիւնը դարմանել: դասարանի մէջ ամէն օր զիրին հարցումներու միջոցաւ խօսեցնելով, տուած պատասխաններուն համեմատ քաջալերելով է որ իր աշակերտին համարձակութիւն պիտի առայ: Երկա՛ր, շատ երկար վարժութիւն է հարկաւոր ազօր ու համարձակ խօսելու համար: Իսկ այդ վարժութիւնը աշակերտը դարձնող տարեշրջանի միջոցին, իր ընկերներու միջեւ, դասերու միջոցաւ պարտի կատարել, և ո՞չ թէ յունիսի այս տաք օրերուն՝ սրահի մը հեղձուցիչ մթնոլորտին մէջ հրատարակային քննութիւն կոչուած սոսմանքին ենթարկուած պահուն՝ երբ ինզճը շուարած ու շրտուած՝ ստակալի յազումներ կը կրէ:

Կ. Պիօն  
(Շարունակելի)  
—(—)

**ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ**  
Սօցիալ, 3 Յունիս  
Յունիս 2-ին Սօցիալիստի արտատոլոր նիստերու հանդիսաւոր փակուածը կատարուեցաւ: Մայրաքաղաքի ամբողջ կարնիզօնը, ձիաւոր, հետեւակ և թնդանօթածիք զօրքեր՝ իրենց խիստ երանգաւոր շարքերով պայտի ու Սօցիալիստի լայն պոզուտան բռնած էին, իսկ հետաքրքիր ամբոխը ամէն տեղ կը վրտար: Օղբ դեղեցիկ էր: Պալատի բակին մէջ՝ իշխանի անձնագահ (կվարդիա) ձիաւոր գունդը կարմիր համազգեստով և սպիտակ փեղարաւոր գլխարկներով կը սպասէին ուղեկցելու իրենց վեհապետին: Յանկարծ թնդանօթներու միահամուռ ու անհզ որսաները երկրի-պետի դնացքը ողջունեցին: հանդիսաւոր թափուրը դուրս ելաւ ընդ առաջ. ոստիկանապետը ձիով, ետեւէն ձիաւոր ժանտարմենու գումարտակ մը, իսկ ասանց ետեւէն իշխանական սրնթաց հեծելազօրքը իր փառաւոր արդու-լարդովը, պալատի արարողապետը և արքունական կառքերը պալատական բարձր պաշտօնեաները, իսկ ամենէն վերջը ինքը իշխանը, չքեղ կառքի մէջ բազմած և շրջապատուած սպայակոյտի բարձր սպաներէ և ձիաւոր հետեւորդներէ: Զօրաց մէջէն անցաւ, ուրբաներու ուրախ բացազանշու թիւններու տակ:  
Ձինուորական փողերը ու թըմբուկները «ի յարգանս» կը հընչէին, իսկ վաշտերու նուագա-

**ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**

**ՅՈՒՆԱՆՏԱ ԵՒ Մ. ՉԵՐԱԶ**

Անարհիտանի մէք Յունիս 7-ի օրը կարգաւորուած Հայկական Արիւնկիկէ անխազան Տօքթ. Ա. Քուրթիի ասեւարակութիւնը:

Տիկնայք եւ Տեարք

Լահէյի մեր կառավարութեան այսպանի ընթացքէն գայթակղած, մե և իմ յարգելի պաշտօնակիցներս անմիջական հարկը տեսանք նոյն իսկ մայրաքաղաքիս մէջ կարճակարգի շքեղ գօնփերաւս մը որ նուիրուած ըլլայ զուտ Հայկական խնդրին:

Այն ստակալի կոտորածներուն ժամանակ՝ որոնց ցաւալի զոհերը եղան հայերը իրենց լիոններուն, Փղք-Ասիայ բոլոր գաւառներուն և միջին Կ. Պօլսու մէջ, մեր սրբտերը արհամարհանքով յուզուեցան և մեր հողիները դողզողին անբացատրելի զայրոյթով մը:

Այն օրերու տեսարանը՝ որ այդ մահահոտ օրերուն մէջ պարզուեցաւ Արաքսայ ափերուն վրայ և հասաւ մինչեւ Երզրազի պալատին մութ յաւաքներուն մէջ, ոճիր մէք որ մեզ կը սարքոցնէր, մարդասպանութիւն

մէք՝ անասնական, ըմբոստացուցիչ, նախատինք մը՝ մարդկութեան երեսին նետուած և անարգանք մը՝ քրիստոնեայ անունին:

Եւ երբ տեսանք քրիստոնեայ եւրոպան այս անկիւն և վայրագ տեսարանին առաջ թեւերը ծալած ու խուզ դարձած Կլատսթընի ձայնին որ միակը եղաւ համարձակող «մեծ մարդասպան» անուանելու այն ոճրագործը, մենք շուարած և ընկճուած մնացինք, և ամբողջ Հոլանտացի ժողովուրդը՝ առանց կուսակցական խորութեան, խիստ կերպով այսպանեց զի անպիտութեան անկարողութիւնը և մեղադարտ ստորութիւնը որ արկուած էր թոյլատրել ընկել այնքան վատ բան մը:

Անկից ի վեր, ամէն տարի, Հայերու արիւնին ճիւղ չզարգեցաւ մեր սկանջն ու սիրտը ծակծակելէ և անհիմար որ կարգաւորութեան վեհաժողովը կը գոմարուի՝ հարստահարեալ ազգերու ազատագրութեան համար արիւն թափող Օրանթի իշխաններուն քաղցր հանդիսարանը եղող Անտառի Պալատին մէջ ուր թրանսվալը ընդունուած չէ, ուրկից Օրանթի ազատ պիտութիւնը դուրս ձգուած է և որուն համեմատ զոյուեցան հայերուն՝ որոնք վաղած եկած էին իրենց ամենազոտն դանդաղները ներկայացրնելու Եւրոպայի խղճահար գտտաւորներուն (2) և երբ այս արհամարուած ժողովրդին փաստարանը

կուզէ երեսը հանրութեան դարձնել իւր նոյնիսկան դատը պաշտպանելու համար, անա մեր պաշտօնական մարմինները անոր արգելքներ կը յարուցանեն և կը յաջողին մինչեւ իսկ նահապահներու ձայնը պահ մը խեղդել:

Իրաւամբ, տիտք և տիկնայք, ամօթէն կը կարմիրք երբ այնքան մեծ վշտի մը հանդէպ յարգանքի պակասութեան մէջ կը գտնուինք ճիշտ այն վայրկեանին որ ամբողջ աշխարհի աչքերը սեւեռած են մեր հայրենիքին վրայ: Մինք իրրեւ ճշմարիտ հայրենասէրներ ինքզինքնիս պատապարտուած և ստորնացած կրղզանք համայն Եւրոպայի առաջ և կարողով օտար մամուլին այս առթիւ մեզ ուղղած արգարացի յանդիմանութիւնը, մեր երեսը հրաշեկ երկաթով այրելը կըզգանք:

Ամէն ատեն մեր սիրելի հայրենիքը եղած էր հալածեալներու պատըսպարանը, հարստահարեալներու վերջին սպաւնը և բռնապետութեան ու միապետութեան բոլոր զոհերուն ապաստանարանը: Խօսելու ազատութիւնը, որ ուրիշ անգիր խեղդուած էր, շունջ կաննէր Օրանթի վահաններով պաշտպանուած այս նոյնիսկան հողին վրայ. և մեր լրագիրներուն մէջ կը սպուէր ամէն ինչ որ կարելու էր, կը ջընջուէր ամենաբնականաբար միապետութիւններուն մէջ, Հրա էր մեր հայրենասիրտական փառքը և ազգային պարճանքը:

Եւ հիմա ամբողջ Եւրոպան մեզ մեր նախահօրց առաքինութիւններէն այնքան այլասեռած կը համարէ որ Սուլթանին ճնշման ներքեւ մենք կը համարձակինք ազատ խօսիլը զլանալ զոհերուն՝ կոտորածի մը որ պիտի մնայ միայն ներկայ դարավերջի աղաք:

Արդ, մեր հայրենիքը այս անարգանքէն ազատելու միակ միջոցը էր ցոյց տալ ամբողջ աշխարհի թէ մեր ոստիկանութեան գարշելի տարբը որ հասարակաց զգացումին արտայայտութիւնը ըլլալէ շատ հեռու էր, չգնահատուեցաւ և բոլոր ազգին կողմանէ առանց քացառութեան զատապարտուեցաւ: Բարեբաղդաբար մեր մամուլը արտատոլոր միաճանութեամբ ուժգնօրէն և անդադար բողբեց: Մեր բոլոր շրջանակներուն, բոլոր ճառախօսութիւններուն մէջ միայն մէկ ձայն մը լսուեցաւ այսպանող՝ ազգային պատուոյն դէմ գործուած այս նախատինքը, մարդկութեան խղճին հանդէպ զայթքած այս լուտանքը և ցաւին սրբութեան դէմ եղած այս անարգանքը:

Մեր հիտաւորի Պրէքէնսէքը ստիշատ լաւ նկարագրեց. «Թէ և Հոլանտական Ատիւնի գլուխը, ըսաւ, նախարարական մականին ներքեւ կը ծոխ Սուլթանին տող, սաւայն այդ Ատիւնը կը յամառի արհամարհել իրեն տրուած այդ վարկարեկ վիճակը, կը ցնցէ զեռ իր պօքը, զայն վեր կը վերցնէ, կը զարնէ և

խումբերը ազգային երգը կերգէին :

Իշխանը Սպարանիէի գուռը հասնելուն պէս նախարարները և երեսփոխանները զինքը դիմաւորեցին և առաջնորդեցին իր գահը : Օգը անվերջ ուրբաներու ազգազոհներէն կը ծփար : Իշխանը կարգաց իր գահածառը . իր շերտ գոհունակութիւնը յայտնեց որ երկրին պատիւը մեծ սայթաքումէ մը ազատուեցաւ շնորհիւ նախարարներու ու երեսփոխաններու կործանելու թեան : Գահածառի ընթերցումը ամբողջ հինգ րոպէ անկեց : Իշխանը վար իջաւ և ուղղուեցաւ իր կառքը . ուր նորէն թնդանթնեքու գոռոցը , զինուորական փողերու և նուագախումբերու սառսառազին ձայները և զինուորներու ուրբաները համերգ մը կը կազմէին : Երբ շքով առաջնորդեցին զինքը մինչև պալատ . վերադարձը աւելի փառաւոր էր , որովհետև ամբողջ թափօրը սանձարձակ էր վազէր . պատանի զինուորները չէին կրնար զսպել իրենց աշխէտ ձիերը , որոնց ամբակներու թափերը հեռաւոր թաղերէ կը լըսուէր : Այս հանգիստու արարու զուրթնէ վերջը զօրահանգէս եղաւ . ամբողջ առաջին զօրաբաժինը զօրասլաներ (բօլօն) կազմած անցան իշխանի առջևէն . ուշագրութեան արժանի էր իրենց մարզած ձիերը որ կարծես շըրջուն պարիսպներու կը նմաներ : Արգարեւ Պուլկարիա հոգարա ըլլալու իրաւունք ունի . իր նորածին ընկերակի լաւ կազմակերպու-

թիւնը իր գոյութեան ամենապահով յենակէտն է :

Յունիս Յին Սթամպուլօֆի մահահան օրը ըլլալով հանդիսաւոր հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ իր գերեզմանին վրայ : Ներկայ էին կինն ու զաւակները , իր հաւատարիմ բարեկամները , նախարարները ու երեսփոխանները , և 4—5 հազար բազմութիւն մը եկած էր այդ մեծ մարդու յիշատակը յարգելու համար : Բանաստասութիւններ եղան , թուեցին տազանդաւոր նախարարապետին ծառայութիւնը : Տիկինը շատ յուզուեցաւ և հաշիւ կրցաւ զսպել ինքզինքը : Այս օրինակելի կինը իր պաշտելի զուգակցի եղբորական մահէն յետոյ ոչ մի բանով չէ մխիթարուած , շարքօրդ տարին է որ ոչ հանգէսի ոչ զբօսանքի չի երթար և ոչ ալ այցելութիւն կուտայ . միայն ամէն առաւօտ կառքով իր ամուսնոյն շիրմին կերթայ , յետոյ տունը կը փակուի իր զուակներուն կրթութեան յանձնելով ինքզինքը . ինքը Սփիլթօֆի ազնուական ընտանիքէ մըն է և Տուկլէն (Գերմանիա) իր ուսումը առած , կարծես Պուլկարիայ պետական մեծ մարդու կինը ըլլալու ձիրքերով օժտուած էր . ինքը անվեհերութեամբ կուրծք տալով դիմացած է այդ մեծ գեթախտութիւններուն : Սփիլթօֆի ամենաեղանակ փողոցներու մէջ օր ցերեկով Սթամպուլօֆ ըզիկ ըզիկ կը ըլլայ 8—10 մարդերէ , իսկ Սթօլօֆի ոստիկա-

նութիւնը չի կրնար ասոնց հետքը գտնալ . ի հարկէ զարմանալի կերեւայ . սեւ սպերախտութիւնը միշտ այսպէս վարձատրէ է իր հայրենիքին համար աշխատողները : Նրա է որ Սթօլօֆ այս անտրդ սպանութիւնով նսեմացուց իր անունը , և իր ամբողջ պաշտօնավարութիւնը արատաւորեց : Սթամպուլօֆի իշխանութեան և անոր հակառուս քաղաքականութեան անմիջական հետեւանքն է ներկայ ազատական ուժեղ կուսակցութիւնը . Սթամպուլօֆի ութամեայ պաշտօնավարութիւնը դար մը ետ վանեց հլւսիսի բռնակալներու ազդեցութիւնը Պուլկարիայէն :

Տ. Թաւրիզ , 11 Յունիս Լիլաւա քաղի դպրոցը

Այս էջերում յաճախ պատեհութիւններ քունեցել խօսելու «Թաւրիզի Հոյուհեաց Բարեգործական ընկերութեան» մասին : Նոյն ընկերութեան բաց էր առած մի մանկապարտէզ , ուր երեք տարուց ի վեր պաշտօնավարում էր մասնագէտ պարտիզպանուհի օրիորդ Հուլիսիմէ Փուլինեան : Ընկերութեան նախորդ և ներկայ վարչութիւնները լիովին գնահատելով օրիորդի մասնագիտական հմտութիւնը և բարեխիղճ պաշտօնավարութիւնը , քանիցս , թէ առանձին պաշտօնական նամակներով և թէ հրապարակաւ , իրանց խորհին և երախտագէտ շնորհակալութիւնները յայտնել էին : Եւ ներկայ

վարչութիւնը իր գոհունակութեան մեծ ապացոյցը աւելցնելով մի քանի ամիս առաջ մի մասնաւոր շնորհակալութեան թղթով օրիորդին մի գորգ ներկելով . և մանաւանդ , իրա վերջին նիւտերից մէկում , կանխօրէն արձանագրեց , որ օրիորդից րնկերութիւնը չափազանց գոհ լինելով , որոշում է յայտնաբերել վարձել նրան :

Այժմ տեսնենք թէ քամին ի՞նչ պէտք փչում է ի՞նչ ուղղութեամբ . ինձ հետ թո՛ղ ընթերցողն էլ զարմանայ . . . . Անցեալ ամս վեր երկին կատարեց մանկապարտէզի ակտը և պատկանելի ( ) վարչութիւնը նիստ կազմելով «մեծամասնութեամբ» (Յի գէժ 4 ձայնով) որոշեց չը պահել օրիորդին : Պատճառը . . . տնայայտ է : Միայն այսքան յայտնի է , որ այս վճռին համաձայն չեղող անգամուհիները երբ պատճառը հարցնում են նախագահից , նախագահը պատասխանում է — մենք այսպէս ենք կամենում — և նրան ձայնակցում են իրա ազդիկը (անդամ վարչութիւն), իրա մէկ խնամի տիկին և քամու գէժ փետուր մի ուրիշ անգամուհի : Մնացած միւս խղճամիտ անգամուհիները բողոքում են այս կամայական և անախակալ որոշման դէմ և հեռանում :

Այժմ բանից դուրս է գալիս , որ օրիորդի հեռացնելու միակ պատճառն է եղել . . . օրիորդի կողմից նախագահին պէտք եղած յարգանք չընծայելը և նրա

կը շայտէ հարստօրէն : Ահա ասոր համար էր ուղեցինք և պնդեցինք որ նոյնիսկ մայրաքաղաքին , կեանքի այս կեդրոնին մէջ ուր ամբողջ երկրին սիրտը կը բարակէ , սպանդարանի ոչխարը եղող և մահուան որդեգրուած ժողովրդին փաստաբաններէն մին իր բողոքի ձայնը լսելի ընէ և մենք բարեբաղդ ենք որ անոնցմէ մէկը բարեհաճեցաւ պատասխանել մեր հրաւերին :

Արդէն բաւական ուշ մնացինք զինքը մտիկ ընելու , ուստի կը փութամ առանց ժամանակ կորսնցնելու պատիւը ունենալ ձեզ ներկայացնելու Տիար Մինաս Չերազը , ինքնալոյստար , աքթորիւրը , հաւատարիմ , եռանդուն և կարող թարգմանը տառապանքներուն ինչպիս նա և ակրկալութիւններուն այն ժողովրդին զոր այնքան անողորմ կերպիւ պատժեցին : Ինքն է որ Բարիզէն վերադառնալով կուզայ փրկել մեր հայրենիքի պատիւը :

Աւերին ձերն է խօսքը , Տիար Չերազ . խօսեցէք առանց երկիւղի , խօսեցէք ազատ կերպիւ ինչ որ կը բաղձաք ըսիլ . մերն է պատասխանատուութիւնը :

Տիար Չերազի ասեմաբանութեան յետոյ :

Բոլոր ներկայից միահաւան զգացմանց վրայ վստահ ձեզ կուղեմ , Տիար Չերազ , մեր անկեղծ և ջերմ շնորհակալութիւնները այն պերճախօս և սրտաշարժ ասեմաբանութեան համար զոր լսեցինք . ամէնքս ալ հիացանք ձեր գանգամներուն չափաւորութեան և ձեր լեզուին պատշաճութեան վրայ :

Մերթ ընդ մերթ տեսանք ձեր աչքերուն մէջ փայլատակող բարկութիւնը ձեր գահիճներուն դէմ , զգացինք անոր թրթուրը ձեր ձայնին մէջ , սակայն վրէժխնդրութեան քոցը չպայթեցաւ , մինչև վերջը դուք ձեր անձին տէրը եղաք , խօսեցաք բարի քրիստոնէի մը նման վստահ ըլլալով թէ վրէժառութիւնը Անոր կը մնայ որ օր մը պիտի պատժէ ամբողջ կայէնները անոնց երեսին պատուով ձեր եղբայրներուն արիւնին ձայնը կայ որ հողին մէջէն զիս կը ձայնէ :

Բարեխիղճ ասեմաբաններուն ներքեւ կըսէ Ս . զիրքը , պիտի գտնուի ամէն անոնց արիւնը որոնք սպանուեցան : Ս . Յովհաննէսի յայտնութեան զըրբքին մէջ մարտիրոսները գահին ետեւէն բարձր ձայնով կը գոչեն «Տէր , մինչև երբ վրէժառու չես ըլլար թափուած արիւնին» : Երկնքի մարտիրոսներուն մէջ , դուք ձեր մարտիրոսներն ալ ունիք , Հայաստանի մարտիրոսները որոնք կազազակեն հիներուն հետ միացած :

Աստուծոյ կը պատկանի ուրեմն վրէժառութիւնը և մեզի՛ ազօթքը , նոյնիսկ մեր զահիճներուն համար . մի միայն ձեր պարագային մէջ , անոնք (գահիճները) իրենց բրածը չզիտցան . իրենց մեծերն էին որ ապստոյլաբար զիտցան և ինչ որ ըրին , որոշումը ըրին :

Թող ձեր ժողովուրդը ո՛չ համբերութիւնը կորսնցնէ և ո՛չ ալ քաջութիւնը . երբէք մի յուսահատիք . Յոյները , Մոսթէնէկերքը , Սրբիւրը և Պուլկարիները յայտնաբերար ազատեցան , կրեան ալ անոնց կը հետեւի . ձեզ համար ևս ազատութեան ժամը պիտի հնչէ . երանի՛ թէ ձեր աչքերը չզոգուէին զայն չողջունած . եւ եթէ ձեր ժողովուրդը կը բաղձայ պահ մը մխիթարութիւն գտնել օտար ազդերուն վտակից համակրութեան մէջ , հարորդեցէք անոր ձեր յրաջան միջոցաւ բոլոր Հոյանապեոց անկեղծ և ճշմարիտ համակրութիւնը :

Մենք ամէնքս ալ Չօլախի կառնասանելովը կամբաստանենք բարբարոսները որոնք վայրի զազաններու նման երկիրը ոտակցին ձեր արիւնովը , կամբաստանենք այն պատասխանատու անձերը որոնք դիտար շարունակեցին իրենց ցունկը ձեր կուրծքին դնել . կամբաստանենք սրտէ և սկզբունքէ զուրկ զիւլանապատեթիւնը որ զձեզ զոհեց իր յախտեղական նկատողութիւններուն :

Քրիստոնէական կամ ցեղաբան-

ներ , արեւմուտքի ամբողջ ժողովուրդ մը ձեր վրայ պարտք կը գնէ հագորդել արեւելքի այն ժողովրդեան որուն արժանի և կորովի ներկայացուցին էք , իր հիացումին արտայայտութիւնը . ձեր ցաւերուն համար զգացած յարգանքը և իր ազօթքը՝ ձեր ապագայ ազատութեան մասին :

Գուք կոչում մը ըրիք մեր ժողովրդրդին . այդ կոչը ուղղակի մեր սրտին կը դպչի : Գուք մեր վեհափառ թագուհիին գովեստը ըրիք . ո՛չ , կըմոռնեմ մեր թագուհիին նման օրինական վեհապետուհի մահուանը ձեզ համար պիտի ըլլար զթոխքէն զկալի արքայութիւն փոխանցում մը :

Իցի՛ւ թէ լոյսը ծնէր և Աստուած գայն ձեզ պարգեւէր :

Եւ մինչև այդ այնքան եռանդուն կերպիւ բաղձողի դարձած օրը , վստահ եղէք թէ ձեր հայրենակիցները եղած են , գեռ են և միշտ պիտի ըլլան մեր յաւաքոյն բարեմաղթութիւններուն և լուրջ հոգածութեան տարկան :

Տիար Չերազ , ընդունեցէք մեր պաշտամունքը՝ ձեր նաշտակներուն յիշատակին և մեր յարգալից ողջոյններուն առհաւատչական՝ ձեր շարչարուած ժողովրդին :

Կը վերջանցնեմ խօսքս գոչելով . կեցցէ Հայաստան :

— ) ( —

արտադրող պահանջներին գոհացում չը տրուիլը . . .

Սակայն առկա է կայ. ընկերությունների քարտուղար պարոնը նույնիսկ այս ու այն կողմ յայտարարել է, որ օրինորդը հեռացրուեց այն պատճառով, որպէսզի ընկերությունը զաշնակցականների ազդեցութիւնից փրկուի . . .

Տարօրինակ չէ՞ք գտնում այս յայտարարութիւնը և մտնաւանդ ձրի զրպարտութիւն օրինորդի նկատմամբ: Իայց մի պահ ընդունինք թէ մէջ բերուած պատճառներն զոյուրիւն ունենան, արդեօ՞ք այս պատճառները բաւական են հեռացնելու մի պաշտօնեայի, որը վարչութիւնների գրաւոր խոստովանութիւնների համաձայն, շատ բարեխիղճ և օգտակար կերպով վարուած էր իրա պաշտօնը. արդեօ՞ք այս պատճառները իրաւունք են տալիս վարչութեան մի այդպիսի որոշում կայացնելու: Պատասխանը ընթերցողներին ենք թողնում: Այս խնդրում «Եսականութիւնը» ակնյայտնի է. և նա է կատարուած ամենամեծ գերը . . .

ՄԻՐՁԱ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ

ՄԱՍՈՒՐ ԵՒ ԿԻՆԵՐ

Ազատ Ամերիկայի մէջ հայ կիներն ալ սկսած են զբաղիլ հրապարակագրութեամբ: «Հայրենիք»-ի մէջ քանի մը կիներ յօդուածներ ունին և կը խոստանան շարունակել: Երեւոյթը մխիթարական է. կիները գրիչ ձեռք առնելով կուզեն մեր ժողովրդին մէջ տիրող հրատապ խնդիրներու լուծմանը աջակցել: Ինչպէս կերեւայ, թէ գրող կիներն են ոգեւորուած և թէ «Հայրենիք»-ի խմբագրութիւնը: Աւրախ ենք. սակայն խորհուրդ մը կուզենք տալ մեր Ամերիկայի քոյր հրապարակագիրներուն:

Նախ ըսենք, որ մենք կուսակից ենք կանանց ազատութեան և անոնց մեզի չափ իրաւունք ունենալուն՝ բոլոր մեր հասարակական խնդիրներուն մէջ. սակայն կը գերադասէինք որ Ամերիկայի ազատ, ընդունակ և գրագէտ կիներ, փոխանակ ընդհանուր հարցերով զբաղելու, ուղղակի հայ կնոջ վիճակով զբաղէր, և մղում տար մեր ընտանիքին մէջ հայ կիներ կաշկանդող ֆլաւաստար նախապաշարութիւնը և արեւելեան մեռցնող աւանդութիւնները խորտակելուն:

Որո՞ւ յայտնի չէ հայ կնոջ վիճակի անտանելիութեանը: Ան բառին բուն նշանակութեամբ ստրուկ է տան մէջ, զոնէ բարոյապէս. թէ ինչե՞ր կը կատարուին հայ ընտանեկան յարկերու տակ, այդ միայն հայ կնոջ յայտնի է իր զգուելի և քսամեն-

լի մանրամասնութիւններովը:

Հայ կիներ միայն կրնայ գիտնալ թէ ինքը ինչ գեր կը խաղալ մեր ընտանիքի մէջ, ուստի և անոր ազատ ու խելացի քրոջ պարտականութիւնն է պատուել մեր ընտանիքը ծածկող խաւար քողը, մերկացունել այն բոլոր թերութիւնները, թէ այլ բնուէ թէ կանանց, որոնք հայ կիներ սեղմած են և անձայն ապուշ մը դարձուցած:

Ժողովրդի մը ապագան կանանց ձեռքին մէջ է: Անոնք են նոր սերունդին մայրերը: Եթէ մեր կիները իրենք՝ ընտանիքի մէջ ստրուկներ չըլլային, գուցէ հայ ժողովուրդը այսչափ ատեն թուրքին ստրուկը չէր մնար:

Ուստի կը փափաքինք որ զբարագէտ հայուհիները եւանդուն կերպով զբաղէին այն հարցերով որոնք ուղղակի կապուին հայուհու վիճակին հետ: Ասով անոնք մեր ժողովրդին աւելի մեծ օգուտ մը պիտի տային:

ՀԻՒԼԷ

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

«Թան»-ի Պօլսոյ թղթակիցը կը հեռագրէ հետեւեալը.

Յուլիանը իրատեսով մը հրամայած է բարձրագոյն գրանանմիջապէս լուծել հայոց Պատրիարքարանի հետ ունեցած խընդիրները:

Ն.Ս.Մ.Ա.Կ.Ա.Տ.ՈՒՓ

ՊՕՍՏՈՆ, Պ. Ա. Լ. Մ. — Ձեր նամակին պատասխանած էինք քարթ փոստով մը: Ձեր առաջին խնդիրը կը կատարենք. բաժանորդ գրուած էք 1898ի ապրիլին, վճարելիք մէկ ու կէս տարուան է:

ԱՄԵՐԻԿԱ, ՈՒԷՍ ՆՕՊՕԲԷՆ, Պ. Ն. — Ձեր զրկած 4.95 տարբը ստացանք:

ԼՕՐԱՆՍ, Տ. Մ. — ստացանք տարեկան բաժնեգիրքը:

Ձ. քաղաք, Մ. — Ստացանք 23 ֆրանք:

ՍՕՅԻԱ, Տ. — Ձեր «Անկեղծ ըլլաք»-ը չենք հրատարակեր: Ձարժեր այդ մարդոցով զբաղիլ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Պօլսոյ Անգլիական գեոպաւնը Ամերիկայի ամիրալ Դէվիլի, որ կը վերադառնայ Ֆիլիպպինեան կղզիներէն, տրամագրութեան տակ գրած է «Իմօժէն» զրահաւորը, եթէ Դէվիլ ընդունի Ամերիկեան գեոպաւնի հրատարակչութիւնը:

— Գրատաղի «Վոյժոտա» Պօլսոյ Բէթթովիչ, Նիգօլա իշխանի հօրեկոյրորդին, որ Պէլլրատի մէջ ձերբակալուած էր Միլանի դէմ եղած դաւադրութեան պատճառով, անցեալ օր երիտասարդ թագաւորի հրամանով ազատարձակուած է և Սերպիոյ սահմանէն արտաքուստ, վաշտ մը ժան-

տարմաներ զանի ուղեկցած են մինչեւ Սէմլին:

Անցեալ շաբաթ շատ մարդ ձերբակալուած է. շատերը ստիպուած էին օտար երկրէ վերադառնալ Սերպիա, որովհետեւ հակառակ պարագային անոնց ստացուած քննքը կառավարութիւնը պիտի գրաւէր:

— Չօրավար Գրուիչը իր բարեկամներու խորհուրդով առայժմ պիտի Ռուսիա մնայ:

— «Ռուս» պաշտօնական թերթը հետեւեալ մանրամասնութիւնները կը պատմէ գահաձաւանդի մահուան մասին. յունիս 28ին առաւօտեան ժամը 9ին գահաձաւանդը պէնզինով շուրժուող ինքնաշարժ կառքով մը զբօսանքի գացած էր: Երկու միոն արագութեամբ անցնելէն վերջը, գահաձաւանդը կառքէն կիջնայ: Գեղջկուհի մը անցած ատեն կը տեսնայ որ գահաձաւանդը մեղմացուցեր է իր կառքին գնացքը. արիւն կը թքնէ, ու վերջը կը կայնի:

Գեղջկուհին վրայ կը վազէ և տեսնալով որ գահաձաւանդի ստքերը կը գողան, կը բռնէ զանի հարցնելով «Ի՞նչ ունիք». գահաձաւանդը պատասխանած է «ոչինչ»: Գեղջկուհին ջուր կառաջարկէ. իշխանը կընդունի նշանով մը. վերջը կը պառկի գետնին վրայ, և, առանց որեէ տանջանքի, խաղաղ կերպով կը մեռնի:

— Գանտիոյ մէջ կռիւ մը տեղի ունեցեր է իտալական և ֆրանսական զինուորներու միջեւ: Կան վիրաւորուածներ երկու կողմէն ալ: Շնորհիւ սպաներու և երկու պետութեանց հիւպատոսներու խնդոյն կարգը վերահաստատուեր է:

— Ռուս կառավարութիւնը յանձնարարած է իր Պէլլրատի գործակառարին մանրամասն տեղեկութիւններ ժողովել Միլանի դէմ եղած դաւադրութեան պատճառով տեղի ունեցած ձերբակալութիւններու մասին:

Գանի մը դեպքաններ, իրենց կառավարութիւններու կողմէ, մանաւանդ գիւրմանականը, որ Միլանին հաճելի մէկն է, խորհուրդ տուած են Ալէքսանդր թագաւորին և Միլանին ձերբակալութիւններուն վերաբերմամբ խոհմ ըլլալ: Ի՞նչ ազատ մնացած նշանաւոր արմատական ազատականները և թէ ձերբակալուածները կը մտածեն բոլորքը օտար պետութեանց:

— Միլանը զինքը շնորհաւորող պատգամաւորութեան մը հաղորդած է թէ՛ Գրատաղի իշխանը և ամբողջ պալատը իրեն դէմ եղած դաւադրութեան մէջ մեծ դեր խաղացած են:

—)(—

Հայերէն և ֆրանսերէն լեզուայ, ինչպէս նաև կրօնագիտութեան, պատմութեան, աշխարհագրութեան, թուարանութեան և բնական գիտութեանց հմուտ ուսուցիչ մը կը փափագի ազգային վարժարանաց միոյն մէջ պաշտօն ստանձնել բանակցութեանց համար պէտք է գիմել խմբագրութեան:

Ս. ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ 4 ՕՇ 4 Ա. 4 Ա. Ր

Մուսալլա, բաղնիք վողոց, Հանի Հասանի օրհիւն սակ:

Ճաշկաւոր, տոկուն և ձեւաւոր կօշիկ շինել սալ ուղղող պէտք է դիմէ Պ. Սահփան Խօրասանճեանի, որուն ճարտարութիւնը մէկ փորձով երեւան կելլայ:

Գիները խիստ գիւրամատչելի:

ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՆԱՍՏԵՂԵԸ

Բանաւ-Բարիպան

Գոնց ԲԱՐԱ-ԳԱՍՊԱՐ:

Պուրկարիոյ մէջ գինը 50 սանթիմ, իսկ արասանմանի համար 60 սանթիմ:

Ցանկացողները թող դիմեն Շարժուելի խմբագրութեան:

ՊՕՐՍԱ

Վաւան 10 Յուլիս

ՊՈՒՂՏԱՅ

Վաւան, լիպրա 55-58, հէքթօլ 9.75-10.50 ֆրանք  
Արապա, լիպրա 55-60 հէքթօլ 10-11 ֆրանք

ԱՐԲԱ

Լիպրա 42-50 հէքթօլ 5.80-6.40 ֆրանք

ՄԻՍՍԻՐ

Վաւան, 55-57 լիպրա, 6.10-6.20  
Առապա, 55-60 լիպրա, 6.40-6.50  
Կիւնտէ 10-12 վաւան, 8-10 առապա կէլմէքտէ տիր:

Առապա մուամէլէսի նարոյէտն 21 ֆրանք հիսապը իլէ տիր:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ՊՆԱՐԺՈՒՄՊԻ

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեւորման, հասցեւորման, նամակագրութեան, հարանեկան հրաւիրազիր, մահազդ, ինչպէս նաև պրօշիւններ:

Գիները յոյժ գիւրամատչելի: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին:

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՆԻՍԻԿ

« Հ Ս Ե Ր Ե Ն Ի Ք »

Ազգային շաբաթաթերթ, տարեկան մէկուկէս տարբ, իսկ արասանմանի համար 10 ֆրանք:  
Հասցէն՝ Խմբ. Հայրենիքի  
628 Third Avenue  
New York City  
(S. V. U.)

Отговорникъ: А. СУКЯСОВЪ  
Печатя на «Взаимность» Варна.